

ԿԼԱՎԴԻՈՒՄԻ ԵՎ ԳԵՐՏՐՈՒԴԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ
ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՍԼԵՏ»-ՈՒՄ

Շեքսպիրյան չարագործների շարքում առավել վառ ու կենդանի անհատականություններից մեկն է Կլավդիուսը: Չամազան իրավիճակներում նա ցուցաբերում է տարբեր հատկանիշներ, որոնց ամբողջացմամբ կերտվում է մի հույժ հետաքրքիր կերպար: Նրան մերթ տեսնում ենք արքունիքի առաջ իր ճարտասանական ծիրքն ու խորամանկությունը ցույց տալիս, մերթ խրատաբանելիս, մերթ մարդկանց շողոքորթելիս ու սիրաշահելիս, մերթ էլ անվարան նրանց ստորաբարշտությունը շահագործելիս: Նա իր մահառիթ գործողություններում վճռական է, բայց մախընտրում է սպանել գաղտնի՝ թույնով կամ դավով: Սովորաբար, անգամ Լաերտի սպառնալից ապստամբության ժամանակ, անվրդով է, սակայն առանձին պահերի կարող է կորցնել ինքնատիրապետումը (օրինակ՝ «Գոնզագոյի սպանությունը» դիտելիս) կամ շփոթվել (ասենք՝ երբ իմանում է Անգլիա մեկնած Համլետի անսպասելի վերադարձի մասին [IV.7.50–59]¹): Նա նույնիսկ ընդունակ է խղճի խայթ զգալու և ծնկի գալու՝ փորձելով Աստծուց թողություն հայցել, կամ Լաերտին խոստովանելու իր կաթոգին սերը Գերտրուդի հանդեպ (IV.7.11–16): Այս ամենի շնորհիվ նրա կերպարը երբեմն անմիանշանակ է և անսպասելի համակրանք է առաջացրել²:

Այդուհանդերձ, Կլավդիուսի բնավորության մի հատկանշական գիծ՝ խաբեբայությունը, որոշիչ է նրա վարքագծում: Նշանավոր շեքսպիրագետ Ջորջ Հիբբարդը, այս հանգամանքի վրա ուշադրություն հրավիրելով, երկի կոնֆլիկտը սրամտորեն հանգեցնում է կեղծիքի ու ճշմարտության պայքարի³: Առաջինի

¹ «Համլետ»-ի տողահամարներն ու հայերեն բոլոր հատվածներն ըստ պիեսի մեր ամբողջական թարգմանության են, որն այժմ տպագրության ընթացքում է:

² Տե՛ս, օրինակ, George W. Knight, 'The Embassy of Death: An Essay on Hamlet,' in *The Wheel of Fire*, introduction by T.S. Eliot, fifth revised edition (sixth printing), Cleveland and New York, 1964 (first published 1930), p. 17–46 (այս հայտնի գրականագետի կարծիքով՝ «Կլավդիուսը չի ներկայացված որպես լիովին չարիք. նա հեռու է դրանից», ցուցաբերում է «գերազանց դիվանագետի ու թագավորի» բոլոր հատկանիշները, «բարի ու մեղմաբարո» (good and gentle) է, պիեսի ողջ առաջին կեսի ընթացքում, «բացի լավ թագավոր լինելուց, տիպական բարեհաճ հորեղբայր է», «չափազանցված ողբի» առիթով նրա խորհուրդը Համլետին «հիմալի ողջամտություն է» և այլն):

³ *Hamlet*, ed. George R. Hibbard, The Oxford Shakespeare, Oxford, 2008 (first published 1987), p. 62–66.

մարմնավորողը Թագավորն է, իսկ երկրորդինը՝ Համլետը⁴: Եթե իշխանին հատուկ է շիտակությունն ու ճշմարտության մշտական որոնումը, ապա Կլավդիուսի մեջ սուտն այնպես է բուն դրել, որ դարձել է նրա էության անբաժան մաս: Նույնիսկ ակնհայտորեն ստելիս Թագավորն ինքը կարող է հավատալ իր ասածին: Նրա վերջին խոսքն է՝ «Բարեկամներ, օգնե՛ք, միայն վիրավոր եմ» (V.2.329), մինչդեռ նա քաջ գիտի, որ խոցված է թունավոր սրով: Կլավդիուսը հարկադրված է ճշմարտությունը թաքցնել, դատապարտված է դրան: Անգամ այն պահին, երբ Թագուհին ընպելու է մահացու խմիչքը, նա ընդամենը ասում է՝ «Մի խմիր, Գերտրուդ» (V.2.293), այլ ոչ թե՝ «Մի խմիր, ընպելիքը թունավոր է»:
Նա կարող էր նաև գավաթը խել կնոջ ձեռքից, ինչպես որ դա քիչ անց ուժերի մի վերջին լարումով անում է մեռնող Համլետը՝ Հորացիոյին թույլ չտալով խմիչքն ընպել (V.2.347–348): Բայց ոչ, որքան էլ Թագավորը շատ սիրի Գերտրուդին, նրա համար կնոջը փրկելուց ավելի կարևոր է ճշմարտության քողարկումը: Երբ Լաերտը նրան հարցնում է, թե ինչու Պոլոնիուսի սպանության համար Համլետին հրապարակավ չի դատել, Կլավդիուսը երկու պատճառ է բերում. առաջին՝ ինքը չի ուզել ցավ պատճառել որդուն անչափ սիրող մորը, և երկրորդ՝ նման դատը վտանգավոր կլիներ, քանի որ արքայազնը լայն ժողովրդականություն է վայելում (IV.7.5–24): Այս պատճառները, նկատում է Հիբբարդը, անշուշտ ունեն իրենց մշակակությունը, սակայն Համլետին չդատելու գլխավոր խոչընդոտը դարձյալ Կլավդիուսի վախն է՝ թե ճշմարտությունը կբացահայտվի և ինքը կկորցնի այն ամենը, հանուն ինչի եղբայրասպան է դարձել:

Թագավորին լավ է բնութագրում առաջին ճառը, որ նա ասում է պալատական հանդիսության ժամանակ (I.2.1–39): Այն կառուցված է կուռ տրամաբանությամբ, և մեզ առաջին հայացքից, երբ դեռ չենք հասցրել ըստ էության ընկալել նրա խոսքը, թվում է, թե տեսնում ենք մի իմաստուն ու իր երկրի հոգսերի վրա կենտրոնացած միապետի: Ակամա հիշում ենք Շեքսպիրի «Ռիչարդ III» ռոբերգույան սկզբում Գլոստերի Դքսի հայտնի մենախոսությունը, որով նա փորձում է տրամաբանորեն «հիմնավորել» իր՝ ոճրագործ դառնալու անհրաժեշտությունը⁵: Թեպետ Կլավդիուսը Գլոստերի պես չի հայտնում իր ծածուկ մտքերը, երկու չարագործների մտածողությունն ու իրենց արարքներն արդարացնելու եղանակը նույնն է: Նրանք խոսում են «Թեև... սակայն... ուստի...» կարգի քերականական կառույցներով, ինչի նպատակն է նախ նշել մի

⁴ Հիբբարդն ընդհանուր առմամբ իրավացի է, սակայն Համլետն էլ լիովին գեղծ չէ ստից: Նա Լաերտին ճիշտ չի ասում, որ Պոլոնիուսին սպանել է իր խելագարության պատճառով (V.2.222–240): Նրա խենթ ծանալը նույնպես կեղծիք է, թեկուզ՝ արդար նպատակով:

⁵ Հմմտ. *Hamlet*, ed. George R. Hibbard, p. 42–43:

անբարենպաստ հանգամանք, հետո դրա դեմ փաստարկ բերել ու եզրակացնել, թե իրենք ստիպված են գործել որոշակի ձևով: Կլավդիոսն իր գահաճառն այսպես է սկսում.

Մեր սիրելի Յամլետ եղբոր մահվան հուշը
Թեև թարմ է, և վայելուչ կլինեն մեզ
Կսկիծ պահել մեր սրտերում, իսկ մեր ամբողջ
Տերությանը՝ վշտից կիտված մի հոնք դառնալ,
Սակայն խելքը պայքարում է բնության դեմ՝
Ստիպելով նրան հիշել խոհեմ ցավով,
Որ այդպիսով չմոռանանք ինքներս մեզ:
Ուստի և մեր քրոջն՝ այժմ մեր թագուհուն,
Օգոստափառ ժառանգուհուն կռիվող երկրի,
Այսպես ասենք՝ մի ընկճված երջանկությամբ,
Մեկ ժպտացող աչքով և մեկ՝ արտասվաթոր,
Թաղմանն՝ ուրախ, հարսանիքին՝ սգո երգով,
Զուգակշիռ զվարթությամբ ու մորմոքով,
Մեզ կին դարձրինք:

Շեքսպիրը նրա խոսքում կիրառել է «օքսիմորոն» կոչվող լեզվական հնարանքը, երբ կողք-կողքի օգտագործվում են հակադիր իմաստներով բառեր («ընկճված երջանկությամբ», «թաղմանն՝ ուրախ, հարսանիքին՝ սգո երգով»): Ղա լավագույնս ընդգծում է Թագավորի խոսքի երկիմաստությունն ու ցույց տալիս, որ ամեն ինչ այնպես չէ, ինչպես երևում է: Մենք դեռևս Ուրվականից չենք լսել սպանության մասին, բայց, Կլավդիոսի մտքի ընթացքին ուշադիր հետևելով, վատ կանխագագցում ենք ունենում: Պարզ է, որ մեր առջև շողում ու երեսպաշտ, եթե ոչ՝ հանցագործ մեկն է: Ինչպե՞ս կարող է ցավը խոհեմ լինել կամ երջանկություն՝ ընկճված, և ո՞վ է թաղմանը երգում ուրախ, իսկ հարսանիքին՝ սգո երգեր: Եղբոր մահվամբ իրոք վշտացած մարդն այսպես չէր խոսի և չէր շտապի կնության առնել նրա այրիին՝ դա արդարացնելով ճոռոմ սովեստաբանությամբ:

Կլավդիոսը նման է այն մարգարտին, որ նա գցում է արքայազնի համար նախատեսված գավաթի մեջ, արտաքուստ՝ գրավիչ, իրականում՝ մահացու թույն: Այդ գրավչության առհավատչյան ամենևին համակրելի տեսքը չէ: Եթե Յամլետին հավատանք, նա սատիր (I.2.140) կամ «վարակված հասկ» (III.4.65) է հիշեցնում, և մեկն է, ում վրա մարդիկ նախկինում «դենք էին ծռում» (II.2.358): Սակայն Կլավդիոսն ընդունակ է շատերին իր կողմը գրավել ժպտերեսությամբ (I.5.106–108), քաղցր լեզվով ու հնարամտությամբ, ինչպես կասեր դժբախտ Ուրվականը՝ «խելքի կախարդանքով, նենգ շնորհքով» (I.5.43): Յենց այսպես էր նա հմայել Գերտրուդին (թերևս մի պահի, երբ նրա ամուսինը գնացել էր սահնակավոր լեհերի կամ Նորվեգացու դեմ մարտնչելու [I.1.63–66, 83–89]) և

նույն կերպ է իզուր ջանում Համլետի սիրտն էլ շահել: Նրա խաբուսիկ, երկդիմի բնույթն ակնհայտ է նաև նշանավոր «աղոթքի տեսարանում»: «Մկան թակարդի» ահավոր տպավորության տակ Կլավդիուսը մի պահ սարսափում է իր քստմենելի արարքի գիտակցությունից ու հասկանում, որ իր՝ ինչպես եղբայր-ասպան Կայենի գլխին կախված է «հնագույն անեծքը»: Թվում է՝ նա պիտի խորապես զղջա ու ապաշխարի, բայց մեր այդ ակնկալիքն իսկույն կասկածի է ենթարկվում (III.3 38–40)։

Անկարող եմ աղոթք անել.

Թեպետ կամքիս չափ ուժեղ է ցանկությունս.

Հորեղ իղծս թույլ է զորեղ իմ հանցանքից:

Եվ չնայած մենախոսությունը շարունակվելու է ու Կլավդիուսը դեռևս հակասական զգացումներ է ունենալու, այս տողերն արդեն հուշում են, որ վերջում նրա ծնկաջոր աղոթքի փորձը կանխավ ձախողված է: Արդարև, ապաշխարանքի իղձը, որքան էլ այն զորավոր լինի, գիջելու է զորավոր մեղքին, և Կլավդիուսը մնալու է նույն հետևողական մեղսագործը: Ընդ սմին պետք է շեշտել, որ աղոթքից քիչ առաջ նա ծրագրել է երկրորդ ոճիրը՝ Համլետին մահապատժի ուղարկելը, քանզի Ռոզենկրանցին ու Գիլդենշտեյնին հրամայում է պատրաստվել ճամփորդության (III.3.2–4. «Պատրաստ եղեք, / Ես կուղարկեմ կարգադրությունն անմիջապես, / Եվ նա ձեզ հետ կգա Անգլիա»): Այդ «կարգադրությունն» Անգլիայի թագավորին ուղղված նամակն է՝ Համլետի մահվան հրահանգը: Դրա մասին Թագավորն իր աղոթքում չի էլ խոսում, կարծես թե եղբորորդուն սպանելու դպրը բնավ հանցանք չէ: Այսպիսին է Կլավդիուսը՝ շեքսպիրյան մի խոշոր ու լիարյուն չարագործ: Թեև նա օժտված է որոշ մարդկային հատկանիշներով և նույնիսկ կարող է ոճանց մեջ կարեկցանք ու համակրանք արթնացնել, դա բավարար չէ, որ «սատիրը» դառնա ողբերգական կերպար:

Ինչ վերաբերում է Գերտրուդին, ապա նրա նկարագրում, ի տարբերություն Թագավորի, առկա են ողբերգական տարրեր: Դրանք ի հայտ են գալիս ոչ միանգամից, այլ աստիճանաբար: Կերպարը զարգանում է՝ անլուրջ ու թեթևաբարո մի արարածից վերածվելով հասուն ու գիտակից կնոջ, ով վերջապես սովորում է հաշվի առնել ուրիշի զգացմունքը և ընդունակ դառնում հասկանալու, թե ինչ են վիշտն ու կորուստը:

Նրան առաջին անգամ լսում ենք I.2-ում՝ Համլետին հորդորելիս, թե՝ «Պետք չէ, որ դու, հավիտյանս, կախ կոպերով, / Գողում փնտրես ազնիվ հորդ» (I.2.70–71): Կարելի է պատկերացնել, որ այդ պահին նրա դեմքին անհոգ ու հիմար ժպիտ է, ինչը, բնականաբար, խիստ խոցում է սգավոր որդուն: Համլետի ցավա-

գին պատասխանը թերևս նրան մասամբ զգաստացնում է և ստիպում միտքն աշխատեցնել: Երբ նա կրկին հանդես է գալիս II.2-ում, համեմատաբար լուրջ ու սթափ կեցվածք ունի և Կլավդիուսին հայտնում է իր կասկածը, թե որդու տարօրինակ վարքագծի «որևէ այլ պատճառ չկա, / Զան հոր մահը և մեր հապճեպ հարսանիքը» (II.2.56–57):

Բանասերներին զբաղեցրել է Գերտրուդի կերպարի հետ կապված երկու հարց. 1) եղել էր արդյոք Թագուհին Կլավդիուսի սիրուհին, երբ դեռ առաջին ամուսինը ողջ էր, 2) մասնակցե՞լ էր նա ավագ Զամլետի սպանությանը⁶: Առաջին հարցի հավանական պատասխանն է՝ այո, քանզի Ուրվականն ուղղակիորեն խոսում է այդ մասին (I.5.42–52): Կարևոր չէ, որ «Գոնզագոյի սպանության» մեջ կինը նախապես չի դավաճանում իր ամուսնուն: Բենադրությունը կազմակերպելիս Զամլետի թիրախն է ոչ թե Գերտրուդը, այլ Թագավորը (մանավանդ որ Ուրվականը որդուն պատվիրել էր մորը խնայել): Երկրորդ հարցին պետք է պատասխանել՝ ոչ, թեպետ դրա վերաբերյալ երկուսն հստակ խոսք չկա: Այս առումով Գերտրուդի զարմանքն «արքա սպանելու» մասին որդու ակնարկի առթիվ (III.4.29–31) բավական խոսուն է. նա տեղյակ չէ, որ սպանություն է եղել: Ղա երևում է նաև ներկայացման ժամանակ նրա պահվածքից. քնած թագավորի ականջը թույն լցնելու դրվագը նրան անտարբեր է թողնում, և երբ շանթահարված Կլավդիուսը ոտքի է կանգնում, նա տարակուսանքով հարցնում է, թե ինչ պատահեց: Իսկ հետո որդուն զայրացած կանչում է իր մոտ, որպեսզի «հորն անարգելու» համար հանդիմանի:

Գերտրուդի կերպարի զարգացման տեսանկյունից բեկումնային է այսպես կոչված «առանձնասենյակի տեսարանը» (closet scene) (III.4)⁷: մոր ու որդու ընդհարումը, որից հետո երկուսին էլ տեսնում ենք ուրիշ լույսի տակ: Մինչ այդ Գերտրուդն, իր անընթացակաությունը Զամլետի նկատմամբ որոշ չափով հասկանալով հանդերձ, առանձնապես չունի մեղքի զգացում: «Ի՞նչ եմ արել, որ քեզ թույլ տաս ինձ հետ կուպիտ / Ու աղմկոտ լեզվով խոսել», – բացականչում է նա (III.4.39–40): Նրանց ծայրահեղ զգացմունքային խոսակցությունն սկսվում է (III.4.10–13) մեկ տողանոց նախադասությունների կտրուկ փոխանակությամբ («ստիքոմիթիա» կոչվող այդ գրական հնարանը կիրառվում էր հին հունական դրամայում)⁸:

⁶ Հմմտ. Andrew C. Bradley, *Shakespearean Tragedy: Lectures on Hamlet, Othello, King Lear, Macbeth*, second edition, London, 1905 (first published 1904), p. 166.

⁷ Հմմտ. Paul A. Cantor, *Shakespeare, Hamlet. A Student Guide*, second edition, Cambridge, 2004 (first published 1989), p. 66:

ԹԱԳՈՒՅԻ Դամլետ, դու քո հորը սաստիկ անարգել ես:

ՀԱՍԼԵՏ Ո՛վ մայր, դուք իմ հորը սաստիկ անարգել եք:

ԹԱԳՈՒՅԻ Բավական է պարապ լեզվով պատասխանես:

ՀԱՍԼԵՏ Շարունակեք մեղսոտ լեզվով հարցում անել:

Նախ մեղադրող կողմը մայրն է, իսկ որդին միայն նրան հակահարված է տալիս, բայց քիչ անց դերերը փոխվում են, և առաջին բախման գագաթնակետից՝ Պոլոնիոսի սպանությունից հետո Գերտրուդը հայտնվում է պաշտպանվող զոհի վիճակում: Որդու անողորմ կշտամբանքին նրա արծազանքները դառնում են այնքան խղճալի ու սրտառուչ («Լռի՛ր, խոսքը / Դաշույնների պես խոցում է ականջներս, / Անգի՛ն Դամլետ...»), «Օ՛, իմ սիրտը, Դամլետ, երկու կես խրեցիր» [III.4.95–97, 158] և այլն), որ զուր եմ չարժում, իսկ Դամլետը, որքան էլ նրան հասկանանք, մի պահ չափից ավելի դաժան է թվում: Մեր աչքի առջև ցավոտ կերպարանափոխություն է կատարվում, և Գերտրուդն անդառնալիորեն կորցնում է իր նախկին կենսախիճը անհոգությունը: Եթե Դամլետն «առանձնասենյակի տեսարանում» լիքաթափվում է ու մեկամաղձոտ մտածողից վերածվում սառնարյուն հայեցողի, ապա մայրը, ընդհակառակը, համակվում է որոշ մեկամաղձությամբ: Նա արդեն մեկն է, ով ունակ է հոգու ախտ զգալ, ցավել իր մեղավորության գիտակցությունից ու դա խոստովանել (IV.5.17–20)։

Հիվանդ հոգուս, բանգի բնույթն այդ է մեղքի,

Ամեն մանրուք սկիզբ է թվում մեծ չարիքի:

Բուռն խռովքից հանցանքն այնպես է հագեցնում,

Որ մատնության վախից ինքն է իրեն մատնում:

Եվ հենց այս կերպարանափոխված Թագուհին է, որ շուտով տխուր, քնարական մեղմ ու գեղեցիկ գույներով նկարագրելու է Օֆելիայի եղերական վախճանը (IV.7.167–184):

Դամլետի հետ խոսակցությունից հետո նա որդուն հավատարիմ է մնում և Թագավորին չի հայտնում նրա «խելագարության» զարդանիքն ու ճշմարտությունը Պոլոնիոսի սպանության մասին (IV.1.7–27): Չի կարելի ասել, թե Թագուհին Կլավդիոսին էլ առաջվա պես չի սիրում (Լաերտի խռովության դրվագում նա վճռականորեն պաշտպանում է իր ամուսնուն [IV.5.117–127]), սակայն նրա սիրտը կիսված է, և կողակցի ու որդու հանդեպ հավասարազոր, իրարամերժ զգացմունքներն անզիջում պայքարի մեջ են: Գերտրուդն, անկասկած, սաստիկ տանջվում է, և նրա վրա այլևս ողբերգական կնիք կա: Թագավորի նկատմամբ իր բուռն սիրուց նա հրաժարվում է մահից անմիջապես առաջ միայն՝ գլխի ընկնելով, որ խմել է Դամլետի համար նախատեսված թունավոր ըմպելիքը: Երբ ամուսինը ստում է, թե նա ընդամենը նվաղել է արյան տեսքից,

կիսամեղ Գերտրուդը ճիգ է գործում և առաջին ու վերջին անգամ հերքում նրա խոսքը. «Ո՛չ, խմիչքը, խմի՛չքը, իմ անգին Զամլետ, / Խմիչքից եմ թունավորված» (V.2.315–316): Սա խորհրդանշական տեսարան է. մայրն այս աշխարհը լքելուց առաջ կապը խզում է չարագործ ամուսնու հետ և միանում որդուն: Իսկ մեռնող Զամլետն իր հերթին նրան ներում է՝ հրաժեշտ տալով իբրև «խեղճ թագուհու» (V.2.312):

Գերտրուդը հակասական է: Դժվար է նրան համարել առավելապես դրական կամ բացասական կերպար: Վերջին տասնամյակներում «ի պաշտպանություն» նրա հանդես են եկել որոշ ֆեմինիստ քննադատներ: Նրանց նշանաբանն է՝ «Քարի եղբե Գերտրուդի հանդեպ» ("Be kind to Gertrude"): Այս փաստը նշելուց հետո Զարուդ Բլումն ավելացնում է, թե, հիրավի, Թագուհին առինքնող է. քանզի Շեքսպիրը նրան օժտել է «հաճելի կայտառությամբ/վավաշոտությամբ» (amiable lustiness), իսկ Զամլետը ճիշտ չի վարվում, որ նրան պարսավում է «առողջ ախորժակի» (healthy appetite) համար⁸: Մի՞թե իրոք, եթե Գերտրուդը գրավիչ է, ապա հենց Բլումի նշած հատկանիշի շնորհիվ: Ոչ ոք դեմ չէ առողջ ախորժակին, բայց արդյո՞ք մենք հրապուրվում ենք Թագուհու անսանձ ցանկասիրությամբ, երբ տեսնում ենք, թե դա ինչպես է խոցել հոր մահը ողբացող որդուն կամ երբ այդ մասին լսում ենք վիրավորված Ուրվականից: Ողբերգության վերջում Գերտրուդը համակրելի է, սակայն ոչ թե իր հրապույրի ու ախորժակի, այլ կարեկցանք առաջացնելու շնորհիվ: Այդ զգացումն ունենում ենք «առանձնասենյակի տեսարանից» ի վեր, երբ համոզվում ենք, որ Գերտրուդի սխալը պարզապես հետևանք է անխոհեմության, ոչ չարամտության:

Նա մեծ մեղսագործության ակամա մասնակից է և միաժամանակ ցավալի զոհ:

THE CHARACTERS OF CLAUDIUS AND GERTRUDE IN SHAKESPEARE'S *HAMLET*

The article discusses the characters of Claudius and Gertrude from different points of view. Though the former is usually and justly considered a remorseless villain, there are a few passages in the play where he appears to be a contradictory personality and, therefore, has unexpectedly aroused the sympathy of some eminent scholars. As to the latter, she is even more complex and, unlike Claudius, has certain elements of a tragic character.

⁸ Harold Bloom, *Hamlet: Poem Unlimited*, New York, 2003, p. 57.